ԳԼՈՒԽ Ի.

'Ի միջէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեսցի այր մի տէր պատուոյ և գաւառի սեպհական յազգէն հայոց դաւանութեամբ հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ վասն նախարարութեան և 'ի տանէն հայոց տացի նմայ նամակ պաշտօնի նախարարութեան ժամանակաւ երիս ամաւ նմանութեամբ Օրինակին։

ԳԼՈՒԽ ԻԱ.

'Ի միջէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն Հայոց ընտրեսցին արք երկոտասան սեպհական յազգէն Հայոց աւանդութեամբն հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ Տեառն պատուոյ և գաւառի վասն խորհրդակցութեան նախարարին հայոց, և 'ի տանէն հայոց տացի սոցայ նամակ պաշտօնի խորհրդակցութեան ժամանակաւ զամենայն աւուրս կենաց իւրեանց աստիճանաւ երկրորդ երրորդիւ մինչև ցերեքտասաներորդ աստիճան, և նամակ պաշտօնատարութեան սոցայ լիցի ըստ Օրինօք որպէս Օրինակն։

ԳԼՈՒԽ ԻԲ.

'Ի միջոցէ բոլոր փոխանորդացէ 'ի տանէն հայոց ընտրեցեալ լինի այրս քսան և հինգ սեպ-